S

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐ, ՁՅՈՒՆԱՇՈՂ, ՄԵԴՈՎԿԱ, ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ԵՎ ԿԱԹՆԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏՈՒՖ ՔԱՐՈՎ ՍԱԼԱՐԿՄԱՄԲ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100»

ք. Տաշիր «10» սեպտեմբերի 2025թ.

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի» կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Կարապետյանի, որը գործում է «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *Տաշիր համայնքի Տաշիր, Ձյունաշող, Մեդովկա, Մեղվահովիտ և Կաթնառատ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալարկմամբ վերանորոգման* աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար։ Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը։

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան։

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 15.11.2025թ։

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով ։

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով։

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար։

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը։

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման

(շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 152 350 950 (մեկ հարյուր հիսունևերկու միլիոն երեք հարյուր հիսուն հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որից 25391825 (քսանհինգ միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար ութ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| | Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.6 տոկոսի չափով |
| | Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Հասարակությանն իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» 22 օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է առանձնացված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

| | | |
|---|---|---|
| | Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.6 տոկոսի չափով |
| | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| | Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի

Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| --- | --- |
| ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան | «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ |
| ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 | Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք, |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | Միկոյան փ., 15շ, 26 բն. |
| Հ/Հ 900272360034 | Բանկ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900272000507 | Հ/Հ՝ 2500011452500100 |
| ՀՎՀՀ 06966995 | ՀՎՀՀ՝ 01048173 |
| ---------------------------------Է. Արշակյան | Մ.Կարապետյան_______________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված թիվ 1*
*«10» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100»*
*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐ, ՁՅՈՒՆԱՇՈՂ, ՄԵԴՈՎԿԱ, ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ԵՎ ԿԱԹՆԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏՈՒՖ ՔԱՐՈՎ ՍԱԼԱՐԿՄԱՄԲ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Հ/Հ | | Աշխատանքի անվանումը | Չափ ման միա վոր | Քանակ | Միավ. գինը /հազար դրամ/ | Ընդհանուր արժեքը /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | Տաշիր բնակավայր, Թումանյան փողոց | | | | |
| | | I. Հողային աշխատանքներ | | | | |
| 1 | | IV կարգի գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (1մ 3) | 1000մ³ | 0.45500 | 843.67093 | 383.87027 |
| 2 | | 2 Տեղափոխում լցակույտ 5կմ | տն | 773.50000 | 2.20062 | 1,702.18121 |
| | | II. Ճանապարհային պատվածք | | | | |
| 3 | | Տուֆ քարով չոր սալարկում h=18սմ հաստ (20*40*18սմ 3 չափի բլոկներ), ավազային նախաշերտի կառուցմամբ 15սմ հաստ, և շովերի ձգում ավազով | 100մ² | 11.21000 | 717.70256 | 8,045.44571 |
| 4 | | Թարնված եզրաշար 15 33սմ չափսի միաձույլ բետոնից Վ.-20 դասի բետոնից, լայնական և երկայնական երկարությունները միասին | մ³ | 31.00000 | 64.69940 | 2,005.68142 |
| | | III. Բետոնե վաքեր (30*34) | | | | |
| 5 | | Փոսրակի փորում III կարգի գրունտում մեխանիզմով՝ բարձելով ինքնաթափին | 1000մ³ | 0.06624 | 652.17438 | 43.20003 |
| 6 | | Հետադարձ լիցք ձեռքով | մ³ | 14.72000 | 1.67867 | 24.71002 |
| 7 | | Ավելորդ գրունտի տեղափոխում 5կմ | տն | 87.60000 | 2.20057 | 192.77014 |
| 8 | | Ավազակոպճային շերտ (վաքերի տակ) h=10սմ | մ³ | 12.88000 | 12.05358 | 155.25011 |
| 9 | | Բետոնե վաքերի տեղադրում | | 14.64000 | 36.39279 | 532.79038 |
| 10 | | Վաք 30*34 L=3 մ | հատ | 61.00000 | 39.24691 | 2,394.06170 |
| 11 | | Վաքերի ջրամեկուսացում երկշերտ բիտումի մածիկով | 100մ² | 1.39840 | 128.28956 | 179.40013 |
| 12 | | Վ-20 դասի բետոն մանրահատիկ ավազով | մ³ | 4.00000 | 62.87254 | 251.49018 |
| | | IV. Մետաղական ցանց | | | | |
| 13 | | Մետաղական ցանցի տեղադրում | տն | 1.94050 | 88.32781 | 171.40012 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14 | | Մետաղական անկյունակ 63*63*6մմ | մ | 208.20000 | 3.66254 | 762.54054 |
| 15 | | Ամրան A-500c 25մմ | տն | 0.74950 | 588.69955 | 441.23031 |
| 16 | | Մետաղական էլեմենտների յուղաներկում (2 անգամ) | 100մ² | 0.22000 | 149.09101 | 32.80002 |
| | | Տաշիր բնակավայր,Աբովյան փողոց | | | | |
| | | I. Հողային աշխատանքներ | | | | |
| 1 | | IV կարգի գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (1մ 3) | 1000մ³ | 0.18830 | 843.65434 | 158.86011 |
| 2 | | 2 Տեղափոխում լցակույտ 5կմ | տն | 320.11000 | 2.20062 | 704.44050 |
| | | II. Ճանապարհային պատվածք | | | | |
| 3 | | Տուֆ քարով չոր սալարկում h=18սմ հաստ (20*40*18սմ 3 չափի բլոկներ), ավազային նախաշերտի կառուցմամբ 15սմ հաստ, և շովերի ձգում ավազով | 100մ² | 4.41000 | 717.70346 | 3,165.07225 |
| 4 | | Թաքնված եզրաշար 15 33սմ չափսի միաձույլ բետոնից Վ.-20 դասի բետոնից, լայնական և երկայնական երկարությունները միասին | մ³ | 15.08000 | 55.77524 | 841.09060 |
| | | Տաշիր բնակավայր, Գագարին փողոց | | | | |
| | | I. Հողային աշխատանքներ | | | | |
| 1 | | IV կարգի գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (1մ 3) | 1000մ³ | 0.21800 | 843.67032 | 183.92013 |
| 2 | | 2 Տեղափոխում լցակույտ 5կմ | տն | 370.60000 | 2.20062 | 815.55058 |
| | | II. Ճանապարհային պատվածք | | | | |
| 3 | | Տուֆ քարով չոր սալարկում h=18սմ հաստ (20*40*18սմ 3 չափի բլոկներ), ավազային նախաշերտի կառուցմամբ 15սմ հաստ, և շովերի ձգում ավազով | 100մ² | 5.18000 | 717.70514 | 3,717.71264 |
| 4 | | Թաքնված եզրաշար 15 33սմ չափսի միաձույլ բետոնից Վ.-20 դասի բետոնից, լայնական և երկայնական երկարությունները միասին | մ³ | 15.80000 | 64.69941 | 1,022.25073 |
| | | III. Ուղիներ | | | | |
| 5 | | IV կարգի գրունտի մշակում և բարձում էքսկավատորով (1մ 3) | 1000մ³ | 0.00830 | 843.37409 | 7.00000 |
| 6 | | 2 Տեղափոխում լցակույտ 5կմ | տն | 14.11000 | 2.20057 | 31.05002 |
| 7 | | Տուֆ քարով չոր սալարկում h=18սմ հաստ (20*40*18սմ 3 չափի բլոկներ), ավազային նախաշերտի կառուցմամբ 15սմ հաստ, և շովերի ձգում ավազով | 100մ² | 0.23000 | 717.69616 | 165.07012 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | | Թաքնված եզրաշար 15 33սմ չափսի միաձույլ բետոնից Վ.-20 դասի բետոնից, լայնական և երկայնական երկարությունները միասին | մ³ | 1.00000 | 64.70005 | 64.70005 |
| | | <u>*Կաթնառատ բնակավայր*</u> | | | | |
| | | <u>2-րդ փողոց</u> | | | | |
| 1 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով | 1000մ³ | 0.28000 | 751.26140 | 210.35319 |
| 2 | 1-961 | նույնը ձեռքով | մ³ | 28.00000 | 3.35262 | 93.87343 |
| 3 | 1-1552 | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.22000 | 975.73057 | 214.66072 |
| 4 | 1-962 | նույնը ձեռքով | մ³ | 26.00000 | 5.90949 | 153.64665 |
| 5 | 1-1553 | 5-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.06000 | 1,313.24964 | 78.79498 |
| 6 | 1-1183 | հիմնատակի տոփանում մեխանիզմով | 100մ² | 24.00000 | 7.89236 | 189.41665 |
| 7 | 5-64 | Ավազի նախաշերտ 100մմ խոշորահատիկ ավազից տոփանումով սալարկվող քարերի տակ | մ³ | 188.00000 | 14.70750 | 2,765.00933 |
| 8 | 1-1212 | Ճանապարհի ծածկույթի սալարկում տուֆ քարով 180մմ հաստությամբ | մ² | 1,880.00000 | 5.98224 | 11,246.61460 |
| 9 | շուկա | կարերի լցնում մանրահատիկ ավազով /խտացումով/ | մ³ | 36.00000 | 9.77640 | 351.95046 |
| 10 | 6-90 | Միաձույլ բետոնի իրականացում շարվածքի եզրերով 280x150 B15 մ.բ. | մ³ | 33.60000 | 60.71989 | 2,040.18834 |
| 11 | 27-38-1 | կողնակի կառուցում ավազակոպիճով 100մմ հաստությամբ տոփանումով | 100մ² | 3.96000 | 102.95316 | 407.69450 |
| 12 | 1-1552 | քանդված բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին | 1000մ³ | 0.61400 | 713.76943 | 438.25443 |
| 13 | Գ130-3 | քանդված բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ | տն | 982.40000 | 1.63065 | 1,601.95349 |
| | | <u>2-րդ փողոց 1-ին նրբանցք</u> | | | | |
| 1 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով | 1000մ³ | 0.02700 | 751.26140 | 20.28406 |
| 2 | 1-961 | նույնը ձեռքով | մ³ | 3.00000 | 3.35262 | 10.05787 |
| 3 | 1-1552 | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.02700 | 975.73057 | 26.34473 |
| 4 | 1-962 | նույնը ձեռքով | մ³ | 2.00000 | 5.90949 | 11.81897 |
| 5 | 1-1183 | հիմնատակի տոփանում մեխանիզմով | 100մ² | 2.10000 | 7.89236 | 16.57396 |
| 6 | 5-64 | Ավազի նախաշերտ 100մմ խոշորահատիկ ավազից տոփանումով սալարկվող քարերի տակ | մ³ | 20.00000 | 14.70750 | 294.14993 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 7 | 1-1212 | ճանապարհի ծածկույթի սալարկում տուֆ քարով 180մմ հաստությամբ | մ² | 200.00000 | 5.98224 | 1,196.44836 |
| 8 | շուկա | կարերի լցնում մանրահատիկ ավազով /խտացումով/ | մ³ | 4.00000 | 9.77640 | 39.10561 |
| 9 | 6-90 | Միաձույլ բետոնի իրականացում շարվածքի եզրերով 280x150 B15 մ.բ. | մ³ | 2.90000 | 60.71989 | 176.08768 |
| 10 | 1-1552 | քանդված բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին | 1000մ³ | 0.05900 | 713.76943 | 42.11240 |
| 11 | Գ130 - 3 | քանդված բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ | տն | 94.40000 | 1.63065 | 153.93364 |
| | | <u>2-րդ փողոց 2-րդ նրբանցք</u> | | | | |
| 1 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով | 1000մ³ | 0.03600 | 751.26140 | 27.04541 |
| 2 | 1-961 | նույնը ձեռքով | մ³ | 4.00000 | 3.35262 | 13.41049 |
| 3 | 1-1552 | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.05500 | 975.73057 | 53.66518 |
| 4 | 1-962 | նույնը ձեռքով | մ³ | 5.00000 | 5.90949 | 29.54743 |
| 5 | 1-1553 | 5-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.01800 | 1,313.24964 | 23.63849 |
| 6 | 1-1183 | հիմնատակի տոփանում մեխանիզմով | 100մ² | 4.80000 | 7.89236 | 37.88333 |
| 7 | 5-64 | Ավազի նախաշերտ 100մմ խոշորահատիկ ավազից տոփանումով սալարկվող քարերի տակ | մ³ | 35.60000 | 14.70750 | 523.58687 |
| 8 | 1-1212 | ճանապարհի ծածկույթի սալարկում տուֆ քարով 180մմ հաստությամբ | մ² | 356.00000 | 5.98224 | 2,129.67808 |
| 9 | շուկա | կարերի լցնում մանրահատիկ ավազով /խտացումով/ | մ³ | 7.20000 | 9.77640 | 70.39009 |
| 10 | 6-90 | Միաձույլ բետոնի իրականացում շարվածքի եզրերով 280x150 B15 մ.բ. | մ³ | 8.10000 | 60.71989 | 491.83112 |
| 11 | 27-38-1 | կողնակի կառուցում ավազակոպիճով 100մմ հաստությամբ տոփանումով | 100մ² | 0.96000 | 102.95316 | 98.83503 |
| 12 | 1-1552 | քանդված բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին | 1000մ³ | 0.11800 | 713.76943 | 84.22479 |
| 13 | Գ130 - 3 | քանդված բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ | տն | 188.80000 | 1.63065 | 307.86728 |
| s | | <u>*Մեղվահովիտ բնակավայր*</u> | | | | |
| | | <u>1-ին փողոց /տեղամաս 1/</u> | | | | |
| 1 | 1-1553 | 5-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.07000 | 1,313.24964 | 91.92748 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | 1-1552 | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.15000 | 975.73057 | 146.35958 |
| 3 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով | 1000մ³ | 0.32000 | 751.26140 | 240.40365 |
| 4 | 1-961 | նույնը ձեռքով | մ³ | 13.00000 | 3.35262 | 43.58409 |
| 5 | 1-968 | ճանապարհի կողնակների մաքրում բերվածքներից | մ³ | 3.00000 | 1.39584 | 4.18752 |
| 6 | 5-64 | Ավազի նախաշերտ 100մմ խոշորահատիկ ավազից տոփանումով սալարկվող քարերի տակ | մ³ | 188.00000 | 14.70750 | 2,765.00933 |
| 7 | 1-1212 | ճանապարհի ծածկույթի սալարկում տուֆ քարով 180մմ հաստությամբ | մ² | 1,876.00000 | 5.98224 | 11,222.68563 |
| 8 | շուկա | կարերի լցնում մանրահատիկ ավազով /խտացումով/ | մ³ | 22.50000 | 9.77640 | 219.96904 |
| 9 | 6-90 | Միաձույլ բետոնի իրականացում շարվածքի եզրերով 280x150 B15 մ.բ. | մ³ | 21.00000 | 60.71989 | 1,275.11771 |
| 10 | 27-38-1 | կողնակի կառուցում ավազակոպիճով 100մմ հաստությամբ տոփանումով | 100մ² | 2.80000 | 102.95316 | 288.26884 |
| 11 | 1-1552 | քանդված բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին | 1000մ³ | 0.55600 | 713.76943 | 396.85580 |
| 12 | Գ130 - 3 | քանդված բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ | տն | 889.60000 | 1.63065 | 1,450.62890 |
| | | <u>1-ին փողոց /տեղամաս 2/</u> | | | | |
| 1 | 1-1553 | 5-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.21000 | 1,313.24964 | 275.78243 |
| 2 | 1-1552 | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.12000 | 975.73057 | 117.08767 |
| 3 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով | 1000մ³ | 0.13000 | 751.26140 | 97.66398 |
| 4 | 1-961 | նույնը ձեռքով | մ³ | 13.00000 | 3.35262 | 43.58409 |
| 5 | 1-968 | ճանապարհի կողնակների մաքրում բերվածքներից | մ³ | 3.00000 | 1.39584 | 4.18752 |
| 6 | 5-64 | Ավազի նախաշերտ 100մմ խոշորահատիկ ավազից տոփանումով սալարկվող քարերի տակ | մ³ | 139.00000 | 14.70750 | 2,044.34200 |
| 7 | 1-1212 | ճանապարհի ծածկույթի սալարկում տուֆ քարով 180մմ հաստությամբ | մ² | 1,394.00000 | 5.98224 | 8,339.24508 |
| 8 | շուկա | կարերի լցնում մանրահատիկ ավազով /խտացումով/ | մ³ | 18.50000 | 9.77640 | 180.86343 |
| 9 | 6-90 | Միաձույլ բետոնի իրականացում շարվածքի եզրերով 280x150 B15 մ.բ. | մ³ | 21.00000 | 60.71989 | 1,275.11771 |
| 10 | 27-38-1 | կողնակի կառուցում ավազակոպիճով 100մմ հաստությամբ տոփանումով | 100մ² | 2.20000 | 102.95316 | 226.49695 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | 1-1552 | քանդված բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին | 1000մ³ | 0.47600 | 713.76943 | 339.75425 |
| 12 | Գ130 - 3 | քանդված բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ | տն | 761.60000 | 1.63065 | 1,241.90531 |
| | | *Չուճաշող բնակավայր* | | | | |
| | | 1-ին փողոց | | | | |
| 1 | 1-1553 | 5-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.32000 | 1,313.24964 | 420.23989 |
| 2 | 1-1552 | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.15000 | 975.73057 | 146.35958 |
| 3 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով | 1000մ³ | 0.09000 | 751.26140 | 67.61353 |
| 4 | 1-961 | նույնը ձեռքով | մ³ | 21.00000 | 3.35262 | 70.40507 |
| 5 | 1-968 | ճանապարհի կողնակների մաքրում բերվածքներից | մ³ | 3.00000 | 1.39584 | 4.18752 |
| 6 | 5-64 | Ավազի նախաշերտ 100մմ խոշորահատիկ ավազից տոփանումով սալարկվող քարերի տակ | մ³ | 193.00000 | 14.70750 | 2,838.54681 |
| 7 | 1-1212 | ճանապարհի ծածկույթի սալարկում տուֆ քարով 180մմ հաստությամբ | մ² | 1,924.00000 | 5.98224 | 11,509.83324 |
| 8 | շուկա | կարերի լցնում մանրահատիկ ավազով /խտացումով/ | մ³ | 23.00000 | 9.77640 | 224.85724 |
| 9 | 6-90 | Միաձույլ բետոնի իրականացում շարվածքի եզրերով 280x150 B15 մ.բ. | մ³ | 43.30000 | 60.71989 | 2,629.17129 |
| 10 | 27-38-1 | կողնակի կառուցում ավազակոպիճով 100մմ հաստությամբ տոփանումով | 100մ² | 5.20000 | 102.95316 | 535.35642 |
| 11 | 1-1552 | քանդված բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին | 1000մ³ | 0.58400 | 713.76943 | 416.84134 |
| 12 | Գ130 - 3 | քանդված բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ | տն | 934.40000 | 1.63065 | 1,523.68215 |
| | | *Մեղրովկա բնակավայր* | | | | |
| | | գերեզմանատուն տանող փողոց | | | | |
| 1 | 1-1553 | 5-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.08000 | 1,313.24964 | 105.05997 |
| 2 | 1-1552 | 4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով | 1000մ³ | 0.34000 | 975.73057 | 331.74839 |
| 3 | 1-1551 | 3-րդ կարգի բնահողի քանդում մեխանիզմով | 1000մ³ | 0.24000 | 751.26140 | 180.30274 |
| 4 | 1-961 | նույնը ձեռքով | մ³ | 16.00000 | 3.35262 | 53.64196 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | 5-64 | երթևեկելի մասի ավազի նախաշերտ 100մմ խոշորահատիկ ավազից տոփանումով սալարկվող քարերի տակ | մ³ | 218.00000 | 14.70750 | 3,206.23422 |
| 6 | 5-64 | մուտքի հարթակի ավազի նախաշերտ 100մմ խոշորահատիկ ավազից տոփանումով սալարկվող քարերի տակ | մ³ | 25.00000 | 14.70750 | 367.68741 |
| 7 | 1-1212 | ճանապարհի ծածկույթի սալարկում տուֆ քարով 180մմ հաստությամբ | մ² | 2,184.00000 | 5.98224 | 13,065.21611 |
| 8 | 1-1212 | մուտքի հարթակի ծածկույթի սալարկում տուֆ քարով 180մմ հաստությամբ | մ² | 250.00000 | 5.98224 | 1,495.56045 |
| 9 | շուկա | կարերի լցնում մանրահատիկ ավազով /խտացումով/ | մ³ | 29.20000 | 9.77640 | 285.47093 |
| 10 | 6-90 | Միաձույլ բետոնի իրականացում շարվածքի եզրերով 280x150 B15 մ.բ. | մ³ | 37.00000 | 60.71989 | 2,246.63597 |
| 11 | 27-38-1 | կողնակի կառուցում ավազակոպիճով 100մմ հաստությամբ տոփանումով | 100մ² | 4.20000 | 102.95316 | 432.40326 |
| 12 | 1-1552 | քանդված բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին | 1000մ³ | 0.67600 | 713.76943 | 482.50813 |
| 13 | Գ130 - 3 | քանդված բնահողի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ | տն | 1,081.60000 | 1.63065 | 1,763.71427 |
| | | <u>Մետաղական բազրիք</u> | | | | |
| 1 | 6-83 | մետաղական ներդիր Նէ-1 էլեմենտներ տեղադրում/12հատ/ | տն | 0.01620 | 383.90789 | 6.21931 |
| 2 | շուկա | Պողպ.թերթ b=6մմ | մ² | 0.27000 | 29.93034 | 8.08119 |
| 3 | Շուկա | խարսխաձողեր Φ12 A500 | կգ | 6.50000 | 0.40329 | 2.62140 |
| 4 | 9-122 | աստիճանների պողպատե բազրիքի տեղադրում | տն | 0.19360 | 154.23512 | 29.85992 |
| 5 | շուկա | պողպատե խողովակ 20x20x2 | մ | 35.70000 | 0.63157 | 22.54705 |
| 6 | շուկա | պողպատե խողովակ 50x50x3 | մ | 46.24000 | 2.48519 | 114.91521 |
| 7 | 14-398 | մետաղական էլեմենտների յուղաներկում երկշերտ | մ² | 6.00000 | 1.60075 | 9.60453 |
| 8 | 6-90 | առվակի անցումի վերանորոգում B15 մակնիշի բետոնով | մ³ | 1.50000 | 60.71989 | 91.07984 |
| | | *Ընդամենը* | | | | *130885.706* |
| | | *ԱԱՀ 20%* | | | | *26177.142* |
| | | *Ընդամենը* | | | | *157062.848* |

*Նախագծերը տես*
<u>https://drive.google.com/drive/folders/19T61GnjTz_gRdQpqvSHR5JlsuCzopiOw?usp=drive_link</u> *հղումով*

Կապալառուն աշխատանքները կատարում է Տաշիր, Ձյունաշող, Մեդովկա, Մեղվահովիտ և Կաթնառատ բնակավայրեր հասցեներում:

Կատարողական կամ հանձնման-ընդունման յուրաքանչյուր փաստաթղթի հետ ներկայացնել ծածկված ակտերը, օգտագործվող շինարարական նյութերի փորձարկման ակտերը, կամ սերտիֆիկատները գործող ստանդարտներին համապատասխան:

Աշխատանքների իրականացման համար պահանջվում է.

Շինարարության իրականացման լիցենզիա հետևյալ ներդիրով՝

03.09. Տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ , արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն) առնվազն 3-րդ դաս

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան | «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ |
| ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 | Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք, |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | Միկոյան փ., 15շ, 26 բն. |
| Հ/Հ 900272360034 | Բանկ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900272000507 | Հ/Հ՝ 2500011452500100 |
| ՀՎՀՀ 06966995 | ՀՎՀՀ՝ 01048173 |
| ---------------------------------------- Է. Արշակյան | Մ.Կարապետյան ---------------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Հավելված թիվ 2*
*«10» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100»*
*ծածկագրով պայմանագրի*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*
## «ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐ, ՁՅՈՒՆԱՇՈՂ, ՄԵԴՈՎԿԱ, ՄԵՂՎԱՀՈՎԻՏ ԵՎ ԿԱԹՆԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏՈՒՖ ՔԱՐՈՎ ՍԱԼԱՐԿՄԱՄԲ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Տաշիր համայնքի Տաշիր, Ձյունաշող, Մեդովկա, Մեղվահովիտ և Կաթնառատ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալարկմամբ վերանորոգման աշխատանքներ | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 15.11.2025թ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 15.11.2025թ. |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272360034
Հ/Հ 900272000507
ՀՎՀՀ 06966995

---------------------------------------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք,
Միկոյան փ., 15շ, 26 բն.
Բանկ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2500011452500100
ՀՎՀՀ՝ 01048173

Մ.Կարապետյան-------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

** Աշխատանքների կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պայմանը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների գնման դեպքում:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ «Ավարտը» սյունակում կատարման ժամկետը սահմանվում է օրացուցային օրերով:*

*Հավելված N 3*
*«10» սեպտեմբերի 2025թ. կնքված*
*N «ՀՀ ԼՄՏՇ-ՀԲՄԱՇՁԲ-25/100»*
*ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231177/504 | Տաշիր համայնքի Տաշիր, Ձյունաշող, Մեդովկա, Մեղվահովիտ և Կաթնառատ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալարկմամբ վերանորոգման աշխատանքներ | առկա ֆինանսական միջոցներով | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | 17774277.5 | 35548555 | 53322832.5 | 53322832.5 |
| | | | ոչ առկա ֆինանսական միջոցներով | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272360034
Հ/Հ 900272000507
ՀՎՀՀ 06966995

----------------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք,
Միկոյան փ., 15$_2$, 26 բն.
Բանկ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2500011452500100
ՀՎՀՀ՝ 01048173

Մ.Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 5.1
«ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100»* ծածկագրով
հրատապ բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «____»______________ 20 թ.

«ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության Միեր Կարապետյանի, ն/բ՝ 010636132, տրված 25.02.2019թ., 005-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար: 1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.5 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.6 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.7 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Երևան, Նոր Նորք վ/շ, Միկոյան փ., 15շ, 26 բն.
ընկերության հասցեն

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2500011452500100
ընկերության բանկային հաշվեհամարը

01048173
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Միհր Կարապետյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

10/09/2025թ.
Օր/ամիս/տարի

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 2500011452500100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 01048173

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 06966995

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900275081108

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 10,209,086.00 /տասը միլիոն երկու հարյուր ինը հազար ութսունվեց/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝
Տուժանքի մասին համաձայնագիր (պայմանագրի ապահովում) N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100»

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Կողիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/______________________/<br>/______________________/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները<br>/______________________/<br>/______________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/______________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/______________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. |

Հավելված 4.2
«ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» ծածկագրով
հրատապ բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան «____»______________ 20 թ.

«ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Միեր Կարապետյանի, ն/բ՝ 010636132, տրված 25.02.2019թ., 005-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Երևան, Նոր Նորք վ/շ, Միկոյան փ., 15շ, 26 բն.
ընկերության հասցեն

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

2500011452500100
ընկերության բանկային հաշվեհամարը

01048173
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Միհր Կարապետյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

10/09/2025թ.
Օր/ամիս/տարի

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝2500011452500100

7. Վճարողի ՀՎՀՀ՝01048173

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 06966995

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900275081108

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 30,627,256.00 /երեսուն միլիոն վեց հարյուր քսանյոթ հազար երկու հարյուր հիսունվեց/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝
Տուժանքի մասին համաձայնագիր (որակավորման ապահովում) «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100»

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/______________________/<br>/______________________/ | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/______________________/<br>/______________________/ |
| 22.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/______________________/<br>/ստորագրություն/ | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/______________________/<br>/ստորագրություն/ |
| 24.բ. Կ.Տ. | 23.բ. Կ.Տ. |
| 24.գ "___" ___ 20___ թ. | 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

«09» 09 2025 թ. N 3961/10/5

**ԵՐԱՇԽԻՔ N 25-0796**
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 16,491,600.00 (տասնվեց միլիոն չորս հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900275081108 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 28/04/2026 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tashirciti@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.
   3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

info@armswissbank.am
www.armswissbank.am
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591

«09» 09 2025 թ. N 5969/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 25-0795
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5,497,200.00 (հինգ միլիոն չորս հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900275081108 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրիցնիպալի միջև կնքվելիք N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 13/06/2029 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tashirciti@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) N «ՀՀ ԼՄՏՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/100» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
   2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

"ARMSWISSBANK" CJSC "АРМСВИСБАНК" ЗАО ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ CUSTOMER SERVICE 02574955 ՓԲԸ

info@armswissbank.am
www.armswissbank.am

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591